



Հ.Ս.Ա.Կ.-Ի

ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ՆՈՐԱՄՈՒՏԻ ԳՐՔՈՅԿ



Ա.Նախարան

Միրելի սկաուտ,

Ուրախ ենք որ դու անդամակցում ես Սկաուտական միութեան: Սկաուտական միութեան մէջ , դու մեզ հետ միասին մասնակից կը լինես մեր աշխատանքներին, որոնք են՝ հերթական հանդիպումներ , արշաւներ , բանակումներ եւ այլ ձեռնակներ:

Դու այս տեղ , այս հաւաքականութեան մէջ կստեղծես քեզ համար մի նոր շրջան, որ նպաստաւոր կը լինի քո ապագայ կեանքում:

Սկաուտական միութիւնը հետապնդելով սկաուտիզմը աշխատում է դաստեարակել պատանեկութեան՝ որպէս լաւ հայեր եւ գիտակից անհատներ , միաժամանակ ծանօթացնելով նրանց հայ ժողովրդի պատմութեան եւ մշակոյթի հետ:

Յոյս ունենք որ դու որպէս գիտակից սկաուտ պիտի կարողանաս աշխատել այս միութեան մէջ , եւ կատարել քո լաւագոյնը ,որպէսզի բոլորս միասին կարողանանք հասնել մեր Սրբազան նպատակին:

Բ.Միջոցներ

Սկաուտական միութիւնը իր նպատակին հասնելու համար ունի բազմակողմանի աշխատանքներ, որտեղ լինում են տարբեր դասարաններ, խաղեր, ձեռքի աշխատանքներ , մարզանք եւ այլ ծրագրեր. Հանդիպումներ տարբեր աշխատանքների վերաբերեալ , քայլագնացութիւն, արշաւներ, բանակումներ, ֆիզիքական աշխատանքներ եւ նման ձեռնարկներ:

Սկաուտը պետք եղած պարագայում, որեւէ առաջարկ ունենալու դէպքում կարող է ազատօրէն, խմբակից մինչեւ միութիւն, արտայայտել իր կարծիքը: Այդ միջոցում սկաուտը սովորում է աւելի սրտցաւ իր հաւաքականութեան նկատմամբ, մտածել նրա մասին եւ աշխատել նրա առաջադիմութեան համար, տալ առաջարկներ , լսել ուրիշների առաջարկները եւ համագործակցել նրանց հետ:

Գ.Կազմակերպութեան եւ Միութեան կառոյց

Երբ շատ թուով անհատներ , որոնք նոյն նպատակն են հետապնդում , հաւաքում են եւ իրենց նպատակին հասնելու համար աշխատում են , այդ հաւաքականութիւնը կոչւում է կազմակերպութիւն:

Հայ Մշակութային Արարատ Կազմակերպութեան նպատակն է՝

Ա. Վառ պահել հայ մշակոյթը եւ ներշնչել պատանուն , ազգասիրական ոգին.



Բ. Դաստեարակել հայ նոր սերնդին ֆիզիքապես եւ մտային մարզերում զարգացնել նրանց ընդունակությունները :

Կազմակերպությունը իր ծրագիրները լրիւ կերպով կատարելու եւ իր նպատակին հասնելու համար, ունի իր ներքին բաժանումները , որոնք են՝ Մարզական միություն, Սկաուտական միություն, Երեցների միություն եւ Արւեստից միություն:

Դ.Սկաուտական միություն

Սկաուտական միութեան նպատակն է՝

Սկաուտական Միությունը իր ծրագրած զանազան աշխատանքներով նպատակ ունի դաստիարակել հայ սերունդներին ֆիզիքապես եւ բարոյապես, որպէսզի ծառայեն մարդկութեան եւ հայ ժողովրդին:


Սկաուտական միությունը բաժանում է 4 հատւածի, հետեւեալ կարգով

- 1-Կրտսերների հատւած-Այս հատւածում աշխատանք են տանում 6-11 տարեկան տղայ եւ աղջիկները:
- 2- Արեւուշների հատւած-Այս հատւածում աշխատանք են տանում 11 տարեկանից վեր աղջիկ սկաուտներ:
- 3-Արիների հատւած- Այս հատւածում աշխատանք են տանում 11 տարեկանից վեր տղայ սկաուտներ:
- 4-Երեցների հատւած- Այս հատւածում աշխատանք են տանում 16 տարեկանից վեր տղայ եւ աղջիկ սկաուտներ:

Հատւածները ունեն նաեւ իրենց ներքին բաժանումները , հետեւեալ ձեւով՝

- 1-Կրտսեր հատւածը բաժանում է 2 մասի՝ Գայլիկների վոհմակ եւ արծիւիկների երամ. Նաեւ կրտսեր ները 2 խումբ ունեն 6-9 տարեկան եւ 9-11 տարեկան բաժանւումով:
- 2-Արեւուշների հատւածը բաժանում է խմբի. Ներկայում 4 խումբ:
- 3-Արիների հատւածը բաժանում է խմբի. Ներկայում 4 խումբ:
- 4-Երեցների հատւածը բաժանում է փաղանգի . Ներկայում 1 փաղանգ


Ամէն հատւած ունի իր պատասխանատուն:Խմբերն էլ իրենց հերթին բաժանում են 4 խմբակների: Իւրաքանչիւր խումբ, վոհմակ, խմբակ, երամ եւ փաղանգ ունի իր պատասխանատուն:Սկաուտական միությունը ղեկաւարում է աշխատանքների ընդանուր պատասխանատուի միջոցով որը սկաուտապետ է կոչւում:





Բարձրագույն Աստիճանատրների Շղթով

Սկսաւուսայեւ-Միութեան Աշխատանքների Հերիանուր Պատասխանատու





Ե.Գիտելիքներ

1-Սկաուտական զգեստ.

Ամեն մի սկաուտ ունի իր զգեստը`

Արենուշներ , Արծիկներ եւ երեցուհիներ- շապիկ եւ փէշ

Արիներ, գայլիկներ եւ երեցներ- շապիկ եւ տապաս

Գայլիկ-Արծիկների զգեստի գոյնը կապոյտ շապիկ եւ սուրմէի փէշ կամ տապաս է :

Արի –Արենուշների զգեստի գոյնը հողագոյն է:

Երեց-ուհիների զգեստի գոյնը մոխրագոյն է

Սկաուտները նաեւ պիտի ունենան իրենց հատուածի եւ խմբի համապատասխանող թաշկինակը, գլխարկը եւ գուլպան ու գոտին:

Միութեան բոլոր սկաուտները պիտի ունենան միութեան մանուշակագոյն թիշերթը աշխատանքի համար:

2-Ձեռք տալ

Սկաուտական ձեռք տալը գործածում է ծանօթանալու կամ շնորհակալութիւն յայտնելու եւ նման պարագային:



3-Սկաուտական նշան

Սկաուտական նշանը գործածում է երդման ժամանակ . նաեւ ուշադրութիւն գրաւելու եւ բարեւ տալու պարագային:





4. Դրօշակներ

Սկաուտական միութեան մէջ, բոլոր խմբակները, խմբերը եւ հասուածները ունեն իրենց դրօշակները . ինչպէս նաեւ միութիւնը ունի իր դրօշակը.

Դրօշակը ներկայացնողն է խորհրդանիշն է որեւէ հաւաքականութեան. Սկաուտը պիտի յարգի եւ պատւի բոլոր դրօշակներին :

5.Սկաուտական բարեւ

Բարեւը սիրոյ եւ յարգանքի արտայայտութիւն է: Սկաուտական բարեւը գործածուում է սկաուտական աշխատանքների ընթացքին . սկաուտները իրար հանդիպելուն պէս, ինչպէս նաեւ դրօշակներին եւ պատասխանատուներին բարեւում են ու յարգում սկաուտական բարեւով:



6-ԽՈՐՀՐԴԱՆԻՇ

Ա-Արեւուշների հասուածի խորհրդանիշ

Բ-Կրտսերների հասուածի խորհրդանիշ

Գ-Երեցների հասուածի խորհրդանիշ

Դ-Արիների հասուածի խորհրդանիշ

Ե-Միութեան նշան

Ա-ԱՐԵՆՈՒՇՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱՆԻՇ

Արեւուշների հասուածի խորհրդանիշը Լիլիան ծաղիկի պատկերն է: Ունի ծաղիկի երեք թերթիկ, որը երդման 3 կէտերն են յիշեցնում: Վերեւի թերթիկի վրայ կայ մի ուղիղ գիծ, որը նշանակում է թէ բոլոր արեւուշները մէկ ուղղութեամբ են մտածում: Երկու աստղերը նշանակում են գիտութիւն և ճշմարտութիւն: Նշանի միջի շրջագիծը, որի մէջ է գտնուում Մասիս սարը և Արաքս գետը, նշանակում է, որ աշխարհի բոլոր արեւուշները միացած են իրար: Արևի 12 ճարագայթները դաւանանքի 12 կէտերն են ցուցադրում:

Խորհրդանշի ներքևի մասում կայ ժապաւենը, որը նմանեցում է արեւուշի ծիծաղկոտ դէմքին: Ներքևի շղթան արեւուշի ընթացքի ցուցադրիչն է:





Բ-ԿՐՏՍԵՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱՆԻՇ

Կրտսեր հատուածի խորհրդանշանում՝ պատկերւած է Գայլի գլուխը և Արծւի թները, որոնք տեղադրւած են, Սկաուտական Միութեան նշանի վրայ:

Գայլի գլուխը խորհրդանշում է արական սեռին պատկանող կրտսեր սկաուտներ՝ գայլիկներին: Գայլը յիշեցնում է անտառի տղայի պատմութիւնը, Մոզլի, Jungle book: Գայլը խորհրդանիշն է արկածախնդիր, աշխոյժ ու հաւաքական կեանքին հաւատարիմ՝ սկաուտների:

Արծւի թները խորհրդանշում են իգական սեռին պատկանող սկաուտներ՝ արծւիկներին: Արծւիկներն էլ, հաւաքական կեանքի հաւատարիմ սկաուտներ են: Այս իմաստով է որ գայլիկների խմբակին անւանում են Վոհմակ իսկ արծւիկների խմբակին Երամ:



Գ-Երեցների խորհրդանիշ

Երեցների Հատուածի խորհրդանիշը խարիսխն է: Խարիսխը փորձառութեան, հզօր կառոյցի , կայունութեան և յոյսի խորհրդանիշն է:



Դ-ԱՐԻՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱՆԻՇ

Արիների խորհրդանիշը կազմւած է ձիթապտուղի տերեւից, որը երդման 3 կէտերն է յիշեցնում: Վերեւի մասում կայ մի ուղիղ գիծ, որը նշանակում է թէ բոլոր արիները մէկ ուղղութեամբ են մտածում: Երկու աստղերը նշանակում են գիտութիւն և ճշմարտութիւն: Նշանի միջի շրջագիծը, որի մէջ է գտնւում Մասիս սարը եւ Արաքս գետը, նշանակում է, որ աշխարհի բոլոր արիները միացած են իրար: Արևի 12 ճարագայթները դաւանանքի 12 կէտերն են ցուցադրում: Խորհրդանիշի ներքևի ժպիտը նմանեցւում է արի սկաուտի ծիծաղով բացւած բերանին: Ներքևի շղթան արի սկաուտի ընթացքի ցուցադրիչն է:





Խորհրդանշի իսկական պատկերը բոլոր ազգերի մէջ նույնն է միայն նրանց մեջտեղի պատկերները ազգային խորհրդանշերին համապատասխան՝ տարբերում են:

Ե.ՄԻՈՒԹԵԱՆ ՆՇԱՆ

Բաղկացած է բոլոր հատուածների նշանների միացումից



Հ.Մ.Ա.Կ.-ի

ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ